ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 5. ՀԻՆ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ

1

Ցանում էին ցորեն, գարի, հաճար, ոսպ, սիսեռ, աճեցնում էին սոխ, սխտոր, դդում, վարունգ: Ընտանի կենդանիներից էին շունը, ոչխարը, այծը, խոզը, ավանակը: Զարգացան արհեստները և առևտուրը: Հարևան երկրներ էին արտահանում հացահատիկ, արմավ, գործվածքներ, բուրդ, կաշի, ներմուծում էին մետաղներ, քար և փայտանյութ:

Հարավային Միջագետքում հողն այնքան արգավանդ էր, որ ցանած հատիկը տալիս էր մինչև 100 հատիկ, մեկ արմավենին տարեկան տալիս էր մինչև 50 կգ արմավ: Արմավենին այստեղ շատ տարածված էր, բոլոր գյուղերը շրջապատված էին արմավենիներով: Արմավենին Միջագետքում անվանում էին «կյանքի ծառ»:

2

«Ես Սարգոնն եմ, Աքքադի արքան: Իմ մայրը ստրկուհի էր, հորս չեմ ճանաչում: Իմ մայրը հղիացավ և գաղտնի ծնեց ինձ: Նա ինձ դրեց զամբյուղի մեջ և զմռսեց այն: Նա ինձ գցեց գետը: Գետը տարավ ինձ Ակկի ջրաբաշխի մոտ: Նա ինձ որդեգրեց և խնամեց: Նա ինձ դարձրեց այգեպան: Երբ ես այգեպան էի, Իշտար աստվածուհին պարգևեց ինձ իր սերը և ես դարձա արքա...»:



Սարգոն I-ը, պատմության մեջ առաջին անգամ, ստեղծել է 5400 մարզված զինվորներից կազմված մշտական զորք: